Հավելված N 4
ՀՀ կառավարության 2011 թ.
մարտի 24-ի նիստի N 11
արձանագրային որոշման

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՐՏԱՆՈԹԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

| Նպատակներ և գործողություններ | Կատարման ժամանակացույցը | Ակնկալվող արդյունքն ըստ յուրաքանչյուր նպատակի և գործողության | Պատասխանատու | Ակնկալվող ֆինանսական միջոցներ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Գումարը (դրամ) | Հնարավոր աղբյուրը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | |
| **1. Սրտանոթային հիվանդությունների և շաքարային դիաբետի ռիսկային խմբերի սկրինինգ** | | | | | |
| 1) Սրտանոթային հիվանդությունների, հիպերտենզիայի, շաքարային դիաբետի ռիսկերի գնահատման, ռիսկերի կառավարման և կենսակերպի հարցերում միջամտությունների ազգային ուղեցույցերի մշակում և տրամադրում առաջնային օղակի բժիշկներին | 2013 թ. | 1) Սրտանոթային հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ ազգային ուղեցույցների առկայություն առաջնային օղակի բժշկական հաստատությունների բժիշկների մոտ | ՀՀ առողջապահության նախարարություն | 1) և 2)-- 2.000.000 դրամ (տեխնիկական աջակցություն- 10 մարդ/ամիս, (ամսական աշխատավարձ 200.000 դրամ)) | Միջազգային դոնոր կազմակեր-պություններ |
| 2) Մասնակիցների համար տեղեկատվական թերթիկի մշակում (սկրինինգի բովանդակությունն ու օգուտները, ինչպես նաև հրավերի օրինակելի ձևը | 2013 թ. | 2) Սկրինինգի մասնակիցների համար տեղեկատվական թերթիկների առկայություն | ՀՀ առողջապահության նախարարություն | | Միջազգային դոնոր կազմակեր-պություններ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3) Սկրինինգի արդյունքների մասին տվյալների հավաքագրման գործընթացի մշակում<br><br><br>4) Առաջնային օղակի բուժհաստատություններում կատարել ծրագրում ընդգրկված մասնակիցների սկրինինգ | 2013 թ.-ից<br><br><br><br>2014 թ. | 3) Տվյալների բազայի առկայություն<br><br><br><br>4) Առաջնային օղակի բուժհաստատություններում հաճախումների աճ, սրտամկանի ինֆարկտի տարեկան առնվազն 400 դեպքի կանխարգելում, շաքարային դիաբետից մահացության տարեկան ցուցանիշի շուրջ 15% նվազում) | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br><br>ՀՀ առողջապահության նախարարություն Առաջնային օղակի բուժհաստատու-թյուններ | ֆինանսավորում չի պահանջվում<br><br><br><br>4) 1.650.000.000 դրամ (Ըստ ազգային վիճակագրական վարչության տվյալների հանրապետու-թյունում ապրում են 40-74 տարեկան 450.000 մարդ, որոնք որակվում են որպես ռիսկի խմբի անձինք: Մեկ մարդու սկրինինգի միջին արժեքը 3666 դրամ է, որը դիաբետի դեպքում ներառում է գլյուկեմետրիա, գլյուկոզացված հեմոգլոբինի որոշում և ակնահատակի զննում, իսկ սրտանոթային հիվանդությունների դեպքում՝ զարկերակային ճնշման չափում, խոլեսթերինի որոշում և էլեկտրոսրտագրի | -<br><br><br><br>Պետական բյուջե |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | իրականացում): | |
| **2. Սրտանոթային հիվանդությունների և շաքարային դիաբետի համաճարակաբանական հսկողության իրականացում** | | | | | |
| Համաճարակաբանական հսկողության համակարգի մշակում և ներդնում: | 2012-2014թթ. | Համաճարակաբանական հսկողության համակարգը մշակվել և ներդրվել է: | ՀՀ առողջապահության նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջվում | - |
| **3. Սրտանոթային հիվանդությունների և շաքարային դիաբետի մասին բնակչության իրազեկման ծրագիր** | | | | | |
| 1) Բժշկահիգիենիկ գիտելիքների ուսուցում և առողջ ապրելակերպի քարոզչություն բնակչության շրջանում՝ ռիսկի գործոնների և սրտանոթային հիվանդությունների ու շաքարային դիաբետի կանխարգելման վերաբերյալ, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով :<br><br>2) Առաջնային օղակի բուժհաստատությունում բնակչության համար ամսեկան անվճար ուսումնական դասընթացների իրականացում:<br><br>3) Զանգվածային լրատվության միջոցներով բնակչության իրազեկում: | 2013թ.<br><br>2) 2012 -2014 թթ.<br><br>3) 2012 -2014 թթ. | 1) Սրտանոթային հիվանդությունների ու շաքարային դիաբետի կանխարգելման վերաբերյալ բժշկահիգիենիկ գիտելիքների իրազեկվածություն բնակչության շրջանում Երկարաժամկետ կտրվածքում սրտանոթային հիվանդությունների և շաքարային դիաբետի բուժման համար պահանջվող ծախսերի նվազում (մինչև 20%)<br><br>2) Առաջնային օղակի բուժհաստատություններ բնակչության այցերի հաճախելիության աճ՝ մինչև տարեկան 4 այց (այդ թվում կանխարգելման նպատակով):<br><br>3) Երկարաժամկետ կտրվածքում սրտանոթային հիվանդությունների և շաքարային դիաբետի բուժման համար պահանջվող ծախսերի նվազում (մինչև 20%) | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն Առաջնային օղակի բժշկական հաստատություններ<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն առաջնային օղակի հաստատություններ | 1) 500.000 դրամ (Մեկ ամսվա ընթացքում 5 մասնագետի վարձատրություն ՝ ամսական աշխատավարձը՝ 100.000 դրամ):<br><br>2) ֆինանսավորում չի պահանջվում<br><br>3) 17.280. 000 դրամ (Հեռուստահաղոր -դումներ՝ 12 600000 | Միջազգային դոնոր կազմակեր-պություններ<br><br>--<br><br>Պետական բյուջե |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | դրամ:<br>Միջինը մեկ հեռուստահաղորդման համար կպահանջվի 350000 դրամ, որը 3 տարվա կտրվածքով ամսեկան մեկ հաղորդման իրականացման համար` 36 X 350000 դրամ կկազմի:<br>Թերթերում հոդվածների տպագրություն` 4 680 000 դրամ:<br>Մեկ նյութի տպագրության միջին արժեքը 130 000 դրամ, 3 տարվա ընթացքում նյութերի տպագրության համար` 36 X 130000 դրամ ): | |
| 4) Իրականացնել բժշկահիգիենիկ գիտելիքների ուսուցում և առողջ ապրելակերպի քարոզչություն բնակչության շրջանում` ռիսկի | 2014-2018թ.թ. | 4) Բնակչության շրջանում շարունակաբար իրականացվում է բժշկահիգիենիկ գիտելիք - ների ուսուցում և առողջ ապրելակերպի | 4)ՀՀ առողջապահության նախարարություն | 4)Հուշաթերթերի տպագրություն – 1 944000 դրամ Պաստառներ- | 4) Միջազգային դոնոր կազմակերպո |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| գործոնների ամրապնդման և այդ գործոնների դիմակայման հնարավորությունների ուժեղացման, ինչպես նաև բարձրացնել բնակչության տեղեկացվածությունը դիաբետի և սրտանոթային հիվանդությունների անհատական կանխարգելման գիտելիքների, ինչպես նաև ախտորոշման ու բուժման արդի հաջողությունների վերաբերյալ: | | քարոզչություն: | | 1 440 000 դրամ Տեսահոլովակ- 1 800 000 դրամ | ւթյուններ |
| **4. Սրտանոթային հիվանդությունների և շաքարային դիաբետի բուժման ուղեցույցների մշակում** | | | | | |
| 1) Միջազգային ուղեցույցների համապատասխանեցմամբ ազգային ուղեցույցների մշակում և հաստատում:<br><br>2) Մշակված և հաստատված ուղեցույցների տպագրում և տրամադրում բժիշկներին:<br><br>3) Բժիշկների ամենամյա վերապատրաստման դասընթացներ՝ ուղեցույցների կիրառման վերաբերյալ:<br><br>4) Բուժման ուղեցույցների մասին | 2013-2014թթ | 1) Բուժման հաստատված ուղեցույցների առկայություն բժշկական հաստատություններում<br><br>2) Սրտանոթային հիվանդությունների և շաքարային դիաբետիով հիվանդների բուժման ելքերի ցուցանիշի աճ՝ առնավազն 15% -ով:<br><br>3) Բուժմանստանդարտների կիրառման արդյունքում ծախսերի խնայողություններ (մինչև 20%)<br><br>4) Ներդրված բուժման | ՀՀ առողջապահության նախարարություն | 1) 18.250.000 դրամ<br><br>2) 10.200.000 դրամ (տպագ-րություն շուրջ 3000օրինակ)<br><br>3) 50.000.000 դրամ (շուրջ 3000 թերապևտիկ պրոֆիլի բժիշկներ)<br><br>ֆինանսավորում չի պահանջվում | 1)Միջազգային դոնոր կազմակեր-պություններ<br><br>2)Միջազգային դոնոր կազմակեր-պություններ<br><br>3)Միջազգային դոնոր կազմակեր-պություններ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| բժիշկների կարծիքների հավաքում և վերլուծություն | | ուղեցույցների մասին բժիշկների կարծիքների ուսումնասիրության հիման վրա դրանց վերանայում և լրամշակում: | | | |
| **5 Սրտանոթային հիվանդությունների բուժօգնության գերազանցության կենտրոնի ստեղծում** | | | | | |
| Սրտանոթային հիվանդությունների բուժօգնության գերազանցության կենտրոնի ստեղծում և դրա գործարար նախագծի մշակում: | 2014-2015 թթ | Սրտանոթային հիվանդությունների բուժօգնության գերազանցության կենտրոնի ստեղծման ծրագիրը մշակվել և ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը: | ՀՀ առողջապահության նախարարություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ/համաձայնությամբ/ | 99 միլիոն դրամ (որը համարժեք է 200000 Եվրո) Հաշվարկը կատարվել է ըստ միջազգային առաջատար խորհրդատվական ընկերությունների մատուցած ծառայությունների գների և ներառում է 4 փորձագետի 5 աշխատանքային այցելություն Հայաստան, այցի միջին տևողությունը` յուրաքանչյուրը 5 օր: Օդանավի տոմսերի արժեքը 1000 Եվրո: 4**5=20*1000=20000Եվրո: Օրավարձը 100 Եվրո, 4*5=20*5=100**100=10000Եվրո: | Պետական բյուջե |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Հյուրանոցի մեկ օրվա միջին արժեքը 100 Եվրո: 4*5=20*5=100**100=10000Եվրո: Գրասենյակային, համակարգչային, ինտերնետային կապի և փոստային ծառայություններ, ներկայացուցչական, չնախատեսված ծախսեր 10000Եվրո: Աշխատավարձը 300 մարդ/օր, յուրաքանչյուր օրվա վարձատրությունը 500 Եվրո: 300*500=150000 Եվրո: | |